

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻՍ
Տարեկան . . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . . 6 «
ԱՐՏԱՍՈՒՄՆ
Երկու քիւ միկ ծաւրով
Տարեկան . . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . . 7 Ֆր.
ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 «
ԿԱՆԻԻԿ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐ ՓԱՌԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ
Act in du journal
Ira-vounk
VARNA (ulgarie)
Редакция
на ВѢСТНИКЪ
Иравуни
ВАРНА

Գրութիւնք եւ լին տրուիր

Իրանոյ 20 տարիով

ՊԱՐՏԵ ՍԸ

Ստանոյ վերջին ազգայնական շարժումը սկսած էր իր ծագումը հետազոտելու և հասնելու իր լուրջ նպատակին իր քաղաքական գործունեության միջոցով։ Ստանոյ վերջին ազգայնական շարժումը սկսած էր իր ծագումը հետազոտելու և հասնելու իր լուրջ նպատակին իր քաղաքական գործունեության միջոցով։

ՍԱՍՈՒՆԻ ԶՍՐԴԵՐԸ

Պատահական թղթակցի մը Բաղեշէն կը գրէ Լ.Ու.ՄէնիՍԹի։
Մուշ փառած Սասունցիի մը եւ կարենէ հասած Հայուն մը հետ կարող եղաւ տեսակցել։ Ահաւասիկ այն տեղիկ լինելու զորս կրցի ստանալ այդ վտանգելի վկայութիւնը։
Ինչիւնի գանդի յարձակումը մայիս 3 ին սկսաւ եւ երեք օր տեւեց։ Շատախի չըջկալ 15 գիւղերու բնակիչները եւ փախստականներու շատերը այս զինուորապետը պատահած էին, այնպէս որ հոն 3 էն 4000 անձ կը հաշուէր։ (20000ըսած է)
Թուրք բանակը ութ ջոկատէ եւ երկու հրետանիէ կը բաղկանար։ Տասը հազարէ աւելի զինուոր կը հետեւէին կանոնադր զօրքին, չըջկալ բազմաթիւ իրենց մարդկէր ժողոված էին, ինչպէս Պատիզանլիները, Պիլիկները, Պալազլիները, Տարիկները, Պալազլիները, Սասունլիները, Սուլթանլիները, Սուլթանլիները, Սուլթանլիները, Սուլթանլիները։ Տեսնելով մեծ ցեղին ներկայացուցիչները պաշտօնագրերու գլուխը անցած կը յառաջանային։
Մայիս 5 ին զօրքը Կէլի-Կիւզան մասը։ Ամբողջ գիւղաքաղաքը դիակներով ծածկուած էր, ամէն սեռէ եւ տարիքէ։ Գիւղացիները ողջ մնացածներուն վրայ ինկան, կանանց ամէն տեսակ տանքնք ատին, անկարգութիւնի վայրերուն թիւումը մը զոհուած բռնաբարեցին, ու յետոյ անոց ստիճաններէ կարեցին եւ փորերը ճեղքեցին։ Բայց ճարպիկ եղող այրերէն շատերը արդէն իսկ փախած ու ցրուած էին ամէն կողմ։ Կանոնադր զօրքը մէկ մասը դիակները անհետացնելու գործին սկսաւ, զանազան այրերով եւ անոնց մօտիկը հեղեղներու մէջ նետելով։
Փախստականները, ընդհանրապէս չորս զլխաւոր ճամբաներ ընտրեցին։ Առաջին մասը Անտօք լեւան բարձունքը ելած էր։ Դիւրսերը հետապնդեցին հայերը, զօրքը ինքնաթիւ մը վեր հանեցին, եւ փախստականները անգամ մըն ալ մասամբ ջարդուեցան մինչդեռ ձիւնը եւ սառնորդը չգոյուծիւնը բազմաթիւ անձերու կորուստին պատճառ կը լայնային։ Գաղիւ հարիւրի չափ հայեր կարողացան հասնիլ լեռներու ստորոտը գտնուող գիւղերը, Մուշի գաղտնի վերջին սահմանին վրայ։
Երկրորդ մասը կրցած էր իրանի գաւառակին մէջ Կէլին հասնիլ, այս հայերը մայիս 11 ին պաշարուած էին

զօրքէն եւ Գիւրսերէն ու հազար մինչեւ 14ը կրցին դիմադրել։ Յուրաքանչեւ 14ը կրցին դիմադրել, ծուրար եւ նօթուծիւնը զանաք ստիպեցին յանդուգն որոշում մը տալու։ Փորձեցին դուրս ելնիլ, ինչ որ բոլորին մահուան պատճառ եղաւ։ Գաղիւ յիսուսի չափ անհատներ մահուանէ ազատուեցան։
Երրորդ մասը մը ուղղուեցաւ դէպի Կիւրիկի անառիկ ժայռերը։ Մայիս 16 ին եւ 17 ին յարձակում կրեց զօրքերէն ինքնաթիւ հարուածներով։ Գիւրսերը որ խիստ բազմաթիւ էին, այդ լեռները ընկճեցին։ Կենդանի մնացածները հազուադէպ են։
Բայց ժողովրդեան մեծ մասը Մուշի ճամբան բռնեց։ Գիւրսերը որ կը հետապնդէին փախստականները, անոնց ետեւէն հասան Աղբիկ եւ ինքուր գիւղերուն մէջ տեղը։
Կոտորածը մէկտեղ մը շարունակուեցաւ, այրերը սպաննեցին, երիտասարդ կիները առեւանգեցին եւ մնացեալներուն թոյլատրեցին Մուշ երթալ։ Այս երկու գիւղերու բնակիչները որ Գիւրսերուն յանձնուած էին, նոյնպէս կոտորուեցան։ Բազմաթիւ հայ երիտասարդներ կապուած տարուեցան տաք ջանքի ենթարկուելու համար։ Միեւնոյն ստան, Կէլիի եւ Կիւրիկի մէջ զօրքը յիւրսերը եւ թիւրք զօրքը յառաջանային Տալուրիկի վերայ։ Ուրիշ վեց ջոկատներ Տիգրանակերտէ մեկնելով հոն կը հասնէին հաւաքակ կողմէն։
Աւարտուած նոր խաւերը զրկուած էին Հաւաքանլը, Խիւնլը, Պազրանլը եւ ձէլալի ճիւղերուն պատկանող ուրիշ քիւրտ ցեղերէ։ Շրջակայ գիւղերու բնակիչները Տալուրիկ փախած էին։ Մայիս 18 ին սկսաւ ընդհանուր յարձակումը։ Հրետանիներ ամբողջովին աւերեցին վեց գիւղեր։ Չարքը ընդհանուր եղաւ, եւ չը գիտցուի թէ դեռ ողջ մնացածներ կան։
Մուշ գանուող 2000 փախստականներուն մէջ չերեւար Տալուրիկի մը։ Այս փախստականները ամէն ինչէ զուրկ են, շատերը վերադարձուած նոյն իսկ փոքր տարիքով մանուկներ թշնամիին զնդակին հանդիպած են։
Սասունի փախստականներէն ոմանց Մուշի գաղտնի գիւղերուն մէջ ապաւինելը պատրուակ եղաւ թիւրք կառավարութեան որ այդ կողմից հայ գիւղերն ալ աւերէ։ Բերդակի դէպքը արդէն ծանօթ է։ Վայրագ քիւրտ մը Հաճի Յէրօ, աստիկանութեան սպայ չորս զինուորներու եւ Գիւրս խումբի մը ղրուխը անցած յարձակեցաւ ու հիւսիս կողմանց Մկրազով գիւղը։ Տիրուէտ, Ալիքլըուն, Աւազարիւր եւ Արնիստ գիւղերը միեւնոյն պատճառաւ վտանգուեցան։ Գաղով Սասուն

նի և՛ գիւղերուն . որոնց 6 ը Շատա-
խի եւ Խիւսի գաւառակէն , միայն
աւերակներ մնացած են : Դուռը Սա-
նոյ խնդիրը լուծելու գործը հայկական
Սասունը բնաջնջելով գլուխ հանեց :

Մասնաւոր հրաման մը կարգիւ
ողջ մնացողներուն իրենց ծննդավայ-
րերը վերադառնալ : Հայերը այլեւս
պէտք չէ որ այս երկու գաւառակնե-
րուն մէջ բնակին : Կուսակալ Ֆէրիտ
պէյ երկար ատեն կէլէ կիւզան մնաց
անձնապէս նախագահելու համար աւ-
րոյժ բնաջնջման գործին :

Գալով Կարնոյ Հայերու կացութեան,
կը վախճուի կոտորածի մը վերակու-
մէն : Կառավարութիւնը կը զբոս-
խալմանը ֆանաթիկութիւնը, անոնց
հաւատացնելով թէ Հայերը ուժեղ զո-
ւորներ կազմակերպած են Կարնոյ
մէջ, եւ քանակաւ ձերբակալութիւններ
կը կատարուին : Այսօր կեդրոնական
բանտին մէջ միայն 93 հայ բանտարկեալ-
ներ կան :

Խնուար մէջ, կը վախճուի վերա-
դարձէն ֆանաթիկ եւ սուրբաբոյն
ղերուն որոնք Սասուն զրկուած են :

Բաղէշի մէջ Հայոց խանութները
փակուած մնացին մայիս 16 էն մին-
չեւ 18, կոտորածի մը շնորհիւ քաղա-
քին մէջ տարածուած ըլլալուն պատ-
ճառաւ :

Տրգրանակերացի Ռէսիֆնէրը մեր-
ժած են Սասուն երկաւ, պատուակե-
լով որ այդ քաղաքի հայերը որոշած
ըլլան իրենց բացակայութեան ատեն
իրենց ընտանիքները կոտորել : Թոյլ-
տուութիւն ստացան միալու Տրգրա-
նակերցի պահպանութեան համար :

Որպէսզի Բիւրսերը գրգռուին Հա-
յերը ջարդելու համար , կառավարու-
թիւնը անոնց կը հաւատացնէ թէ
բազմաթիւ հայ խումբեր միայն նշանի
մը կը սպասեն ոռւս եւ Պարսիկ
սահմանները անցնելու եւ քիւրտ
գիւղերուն յրաժարակալու համար :

Կացութիւնը աւելի ծանր է քան
1875 ի կոտորածներու նախընթացը :
Պէտք է խոր Եւրոպան միջամտէ փու-
թով եւ աղղուօրէն :

ՄՈՒՇ ԵՒ ԿԱՐՆ

Սասունի մօտ գործերը ոչնչացու-
ցին 10 հայ ապստամբներու խումբ մը
եւ ասոնցմէ մէկը որ ինքզինք ոռւս
տեղակալ կը կոչէ, գերի բռնուած է :
Վերադարձը Կարնոյ կոչուող բռնուած
է իր երկու ծառաներու հետ եւ Մու-
շի հիւանդանոցը զրկուած :

4. Պօլիս 15 Յունիս

Պիթիլիի կուսակալին մէկ հեռա-
գրի մը կ'իմացունէ թէ հայ փախստա-
կանները մեկնած են Մուշէն՝ Սասուն
վերադառնալու համար :

4. Պօլիս 28 Յունիս (Թիւրքի)

Կարնի մէջ վերջին լուրերը կը հաղոր-
դեն թէ գործերը ընդհատուած մը ունե-
ցած են և՛ 7 հայ ապստամբներու խումբ
մը հետ, որ անցած էր Կովկասի սահ-
մաններէն : Խումբէն 37 հոգի սպան-
նուած եւ 5 հոգի վիրաւոր գերի բռ-
նուած են : Սպաննուած է թուրք
սպայ մը, զինուորներ ալ սպաննուած
կ'ու վիրաւորուած :

ՅԻԼԻՊԵՒ ՆՕԹԵՐ

Ահա պատասխան մը « Թղթակից »
կեղծ անունն տակ կ'ըկտող խմբակի
սղոյ :

Ցաւալի է որ հայ ազգին անարատ
ողին կրող գործիչներ տակաւին կը
հայաժողովուրդն ու կը շարժարտին խումբ
մը մոլեռանդ ու կուսակցական ան-
հատներ, ցեղեր նոյնիսկ իրենց պատ-
կանած կուսակցութեան եւ ազգին :

Ինչպէ՞ս զիջանք պատասխանել
հայհոյելու ունեւորութիւնէ տառապող
խեղճուկներու, պահ մը կը շուարթի :
Ահա « անփորձ » մը քանի մը աղե-
քի թակարդ մը եղաւ Հայկական կըր-
թարանի դաւադիրները խուլիլու, թըշ-
նամները ոչ-դաշնակցական բոլոր կըր-
թական հաստատութիւններու : —

Սակայն կեցէ՛ք նայի՛նք, մի գուցէ

նոր ծրագրի մը համեմատ, նոր սե-
լուներ մը պատրաստելու համար. նոր
հաջողութիւններ, ինքնակոչ գործիչներ,
« քաղաքական » խոշոր բառով փի-
լիպէի հանգստիկ փողոցները ձեռնի
ուղած ըլլան եւ մոռցած կուրծք պար-
զելու Սասունի լարձուքներէն սլա-
ցող գնդակներուն գէտ :

Պարոններ, զիս զէպի Սասուն հը-
րաւիրելով կարծեմ թէ « անփորձ »
գնդակի բռնել տալ կու գէք : Ո՛հ, մի
հերոսներու . վայրը ձեր ծագածու-
արեւելուն եւ հայհոյակց լիցուծներուն
խաղալիք դարձաւ, չէ՞ք գիտ' որ
վտանգաւոր է « անփորձ » մը ազգա-
սիրական զգացումներուն հետ խաղալու :

Դուք զիս բան մը կը կարծէիք հե-
ռուէն, բայց հայ ազգիւ դատակարար
ձեր պատկերը կը տեսնէ ձեր հայհո-
յանքներով նկարուած յօգուածներուն
մէջ եւ հաւանական է շատ չանցած
պիտի գուցէ ձեզ « ապերաստ » ներկայ :

Ձեր աղայական հարցումը, Պատ.
Հայկ Եւրոպայի ու սոցիալ մը ըլլա-
լու արժանաւորութիւնը որոշող ժո-
ղովը՝ ձեր անորոշ խմբակը չէ, բայց
յոռապիտեութեան անվիշտ պաշտպան
Պուլկար կառավարութիւնը — Ի Սօֆիա :

Անշուշտ հայհոյողը կրնայ ստել ալ
բայց չէ՞նք զիտեր որ թուարանական
ճշմարտութիւններն ալ տարանջատ չափ
ինքզինք կը ստորնացնէ այդ խմբակը
որ ցերեկով :

Հայկական կրթարար ունի չորս
ուսման, համալսարանական կրթու-
թիւնն առած, վկայեալ յայտնի գրէճ-
ներէ ինչպէս Լժնտոն, Նէօշտիլ, Կլա-
րուա, Մարգուան եւ Հոմ գրէճ (Իս-
կիւսալ) Արդ, ինչպէս իշեցուցիք
չարք երկուքի . բայց ձեր պիւթա-
գորտան, ոչ սիւսիցայ, « Ինքզինք »
ըլլան բազմապատկութեան աղիւսա-
կին մէջ (2-2-2) երկու անգամ երկու
դարձեալ երկու կրնէ. այո՛, մեք գի-
տենք հայհոյանքները կը բազմապատ-
կէք, իսկ թուարանական աղիւսակը
կը խեղդութիւնք ալ ինչ՞ չէք կրնար
ընել :

Հացի խնդիր մը մէջտեղ բերելով
եւ բարեկամական չըջանակի մէջ ընդ
հանուր առմամբ կրթութեան մասին
եղած անկարեւոր խօսակցութիւն մը

ծամածռելով, քանի՞ զձեզ կը Խոր-
նացնէք իրենք զիրենք մարդ զգացող
հայոց առջեւ. զի բաւական չէ որ
գուք զձեզ միայն հայ զգացած կար-
ծէք :

Ահա ուրիշ ապացոյց մըն ալ անկ-
ման եւ սղորմելի խմբակներ : Սպառ-
նական համակրէն պարտականութեան
այն մասը միայն ձեր գործին եկեր է
չեղանել, ուր ձեր սուր հոտառութիւնը
միայն կրօնական գոյն կը վնասէ (' ')
համակրէն պարտականութեան այդքան
տեղեկանալէ յետոյ կարող էք նաեւ
« շատցուր աշակերտներդ . . » կտորն
ալ զոգ գիտնալ, զոր զանց առած էի
նախորդ յօդուածին մէջ յայտնի ձեռ-
պատակաւ եւ այսօր այդ նպատակը
իրադրուած է. դուք ազատ գտաք
զձեզ ինքզինք միայն կրօնական գոյնով
ներկայացնել, մինչդեռ սպառնացումը
կրօնական պատրուակով դպրոցի
չուրջ կը դառնայ. հիմալ ու՛ր էք :

Արդ, հայ հասարակութիւն, ձեզի
կը թողունք որչիլի եւ ըսել թէ, ինչ
սարքերութիւն կայ « Մեծ Ոճրագոր-
ծին » եւ իր արեւելիկ համախոհնե-
րուն եւ այս խմբակի միջեւ, անոնք
խօսակցութիւնը կը զրգանէ հայու-
թեան դէմ, իսկ յիշեալ « ալլաղաղ »
խմբակը՝ լուսաւորչականութիւնը բո-
ղոքականութեան « Հայ Աւետարա-
կանութեան » դէմ կը լարէ :

Հայը ըլլայ լուսաւորչական, կաթո-
լիկ, բողոքական եւ մինչեւ իսկ ան-
հաւատ, թէ՛ նա զարդացած է միմե-
րնչ՝ հայութիւնը վեր ու բարձր կը
բռնէ բուն իր տեղը. ու չը չփոխէ
անձնական համոզումը աղգութեան
հետ :

Իսկ դուք տակաւին իսկ տղանք
ԸԼԼ՝ լուս էք որ տգէտ, քսու եւ ժող-
ուանք անհասկնալու ծամածուռ տեղե-
կութեանը կը հետեւիք — անշուշտ այդ-
պէս ալ կը վայելէ — կոյրը կոյրին ա-
ռաջնորդ, երկուքն ալ . . .

Յիւլիպէ 14 յունիս
Գ. ԳՍԼԱՆԱՆ

Յ. Գ. Վերի գրութիւնը ստորագրած
պահուած չեաք ինչպէս Պ. Կ. Պիտեանի
յարձակողականը իմ կարծ բայց որոնիչ

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Արտաստուած « Բանասէր » Հանդէսէ)

(Ծար . նախորդ թիւէն)

Նոր ծրագրի մէջ թիւս այլոց ասուած է եւ այն,
թէ « Հայ ազգը երջանիկ կը համարի իրեն . եթէ
իւր հարուստ եւ առաջաւոր տները զաւակներէր
կազմուէր մի զօրագունք (Դրուծինա եւ կամ Էս-
կաղըն) , եւ գտնուէր Ս . Պետերբուրգում » նոյն
իսկ կայսեր անձնաւորութեան մօտ իրեն թիկնա-
պահներ : Որչափ արգելքներ սակաւ լինին , որքան
ծառայութիւնը հեշտ՝ այնչափ էլ ցանկացողների
թիւը կ'աւելանայ . »

Երագիրն առաջարկում էր , որ մի առանձին
ղիւնուորական դպրոց (Կորպուս) հաստատուի հայ
սպաններ պատրաստելու՝ առանց տէրութեան գան-
ձարանի օգնութեան , թէ այդ դպրոցում եւ թէ
ուրիշ նմանապիսի հաստատութեանց մէջ ոռուսաց
լեզուի ուսումը պարտադիր լինի : Դժբաղդարար այն
ծրագրի վախճանը մեզ անյայտ է :

Հայաստանի ազատութեան երկու նշանաւոր
գործիչները եղան եւ նորա խաղաղ կենսական աս-

պարիզի մէջ առաջին ղեկավարները : Սաքա էին
Կրասովսկին եւ Ներսէսը :

Երբ Երեւանը նուաճուեցաւ եւ ամբողջ նահա-
ղը Նախիջեւանի դաւադիր հետ միասին միացաւ
Ռուսաստանին , Երեւանի սարդարների հոյակապ
պալատումը բնակուեցաւ զենեալ Լէյտինանտ
Կրասովսկին՝ Հայաստանի առաջին զինուորական
Նահանգապետը :

Մինք չենք ուզում ասել թէ , հազիւ նոր արեւա-
պետած երկրումը նա իւր խաղաղ գործունեութեան
ժախնակ մեծամեծ հրաշքներ գործեց , այսքանին
էլ բաւական է վկայել , որ մօտ անցեալի մէջ կը-
րած նեղութիւնից յետոյ հայերը օրնուօր եւ փառա-
բանում էին Կրասովսկու անունը իւր ստորագրե-
րանքներից ոչ սակաւ , բաւական է ասել , որ
Կրասովսկին ժողովրդի հետ մարդասիրաբար վարուե-
լու պատճառաւ մեղադրուեցաւ իրեն Հայերի շա-
հերին պաշտպան եւ կուսակից :

Ներսէս Արքեպիսկոպոսը , որին կարելի է կո-
չել Հայ ազգի իսկական պիտի եւ գլուխը , Վր-
թագայաւ կարճ միջոցում կատարած իւր գործունե-
ութիւնները անմոռաւորի կացութեանն է :

Իրեն ապացոյց իւր շնորհակալեաց հաւատեացը
առ Աստուած եւ առ կայսրը՝ Հայաստանի գործը
յաջող վախճան ստանալու համար : Ներսէս ունե-
ւոր է իւր հօր գերեզմանի վերայ , որ սարդարա-
բագումը իւր հաշիւով կը շինէ մի ոռուսական եկե-

ղեցի Նիկողայոս սքանչելագործի անուանով :

Այս բարի գործին մասնակցեցին Սարգսիսապետու
գտնուած բոլոր քրիստոնեայ ազգայնականութիւննե-
րը եւ տաճարը հիմնուեցաւ Կրասովսկու Ներկայու-
թեամբ 1 ին յունվարի 1878 թուին :

Սորանից յառաջ մի այգպիտի հանդէս էլ Երեւա-
նումը կատարուեցաւ : Ռուսների Երեւան ոտք
կրկնած ժամանակը այն տեղ կար միայն մի քրիստո-
նէական տաճար որ Հայերին էր պատկանում : Այս
մի աղքատիկ հին եկեղեցի էր Զօրավար անունով
որ ըստ աւանդութեան իր ստորեկեայ խորանում ամ-
փոփած ունի Սաւուղին մկրտող Անանիա առաքե-
լոյ մասունքը :

Պարսկերէից ցանկացաւ մշտնջենաւորել պարս-
կական անտեղի ամրոցի առման յիշ. տակը մի նոր
տաճար հիմնելով :

Եւ ահա նորա միջնորդութեան համաձայն , 1582
թուին տաճիկներից հիմնուած Երեւանի գլխաւոր մե-
շիկը ոսկէ լուսնով զարդարուած , փոխուեցաւ
Ռուսաց եկեղեցի յանուն հովանաւոր սուրբ Աստու-
ածածանի (Պոկրով) ի յիշատակ Երեւանի բերդի առ-
ման . որ կատարուել էր նոյն օրը :

Ներսիսի աշխատութիւնովը կայսեր անուանա-
կոչութեան օրը տաճարն առգէն պատրաստ էր :

Այդ օրուան համար Նեկայի ամուսնիցը ուղար-
կուած էր Զանգուի ամրոցը սրբազան սպաննել ,
խաչկալ , թանգալին անօթներ եւ սեղանի ու ոկն-

երկաթը ուղղուած էր սպանական
գործիւն հեղինակին կամ անոր հա-
մարձներուն :
Իսկ եթէ Թիւրքի մէջ «հարկ եղած
ատեն ճակատին զարնելու եւ երեսին
խփելու» երկատարող մը կայ, ան ալ
Գալիստիոն է : Երբեք որ Երբեք, բոլոր
պէտք է : Հայկական կրթական ու
պատ. Հայկ Եւրոպական ապրին :
Կապանի եւ ես

ՆՈՅՆ

ՊԱՏԵՐԱՆՄԻ ԼՈՒՐԵՐ

Բեքերապուրկ 15 յունիս—
(պաշտօնական) Զորապետ Քուր-
թաթըն Զարին կիւմայէ, թէ
ամսոյ 4 ին երեկոյն ճարտա-
կան զօրքերը սկսան յարձակողա-
կան գործողութիւնները մեր ու-
րեւելեան վաշտի յառաջապահ-
ներուն գէտ, որոնք կը գտնուին
Ֆոշուրին, Մոտաւին եւ Տալ-
նիի անցքերուն առջև :

Մեր յառաջապահները գէպի
Տալնիի անցքը ետ մղելէ յետոյ
13 ի երեկոյն ճարտարները
շարունակեցին իրենց յառաջ-
լաւարդութիւնը Տալնիի անցքին քով
գտնուող ռուսական դիրքերուն
դէմ : Որոշ յառաջապահները
մինչև որոշեալ ժամանակ մը լաւ
գիւղացիութիւն մը ցոյց տուին
թշնամուտի հետեակ գումա տա-
կին, որ կը յառաջանար երկու
հրետանիով, բայց որպէս զի չի
շրջապատուին ռուս ճարտարներ
զօրքերէ, անոնք (մեր յառաջա-
պահները) ստիպուեցան տեղի
տալ :

Մեր հետազոտիչներուն տեղե-
կութիւններէն կը հասկնաւ որ
ճարտարական հարաւային բանակի
զօրաց մէկ մասը կը յառաջանայ

հիւսիսային արեւելեան ուղղու-
թեամբ, որպէս զի միւսնայ զօրա-
վոր Քուրթի բանակին հետ,
կէս օրին ընդունեց : Եւ տեղեկա-
գիր մը, որ կիւմայէ, թէ մեր
այրուձին յաւը ընդհարում մը
ունեցեր է Մուրիշանի մօտ : Հա-
հառած տեղեկութիւններու համե-
մատ գէպի Մանչուրիայի բանակը
շարժող ճարտարական զօրութիւն-
ները կը հասնին : 8—9 զօրաբա-
ժին հետեակ եւ քանի մը գումար-
տակ ճարտարական պահեստաւոր
կը գտնուի արդէն առաջին գը-
ծին վրայ :

Լօնտոն 15 յունիս

«Րաթէր» գործակալութիւնը կի-
մացունէ Թօթթիլէն անհատական աղ-
բիւրէ թէ ճարտարի անցեալ կիրակի
երեք անգամ յարձակեցան Քուրթ Սը-
թուրի վրայ եւ քրդաբազարին հա-
րաւարեւելեան կողմը երեք ամբու-
թիւններ գրաւեցին :

Բեքերապուրկ 16 յունիս

«Տէլըր» թղթիւնաւոր, Պալ-
թիկ ծովուն մէջ, ընկղմեցաւ իր
ազգամթերքի պահեստին մէջ պատա-
հած պայթուի մը հետեւանալով : Երեք
սպայ եւ 23 նաւազներ խղզուեցան,
երկու սպայ եւ 10 նաւաղ ազատուե-
ցան :

Լօնտոն 15 յունիս

Թիւրքիստէն կիւմայուն «Րե-
թէր» գործակալութիւնը թէ աղբ քաղ-
բին մէջ պատող զոյգի մը համեմատ
ուռաները երկ մեծ պարտութիւն մը
կրեցին Հայկէսկէն 25 հազարամէթը
հետոյ ճարտարներուն արագ յառաջ
խաղաղութիւն հետեւանալով : Թաշիշայի
մօտ գտնուող Ռուսները առաջարկեցին
գէպի հրետան քաշուիլ, վախճալով
որ իրենց նահանջի գիծը չկտրուի :

Լօնտոն 16 յունիս

Թօթթիլէն մասնաւոր տեղեկութիւն

ներ : Կիւմայուն «Րեթէր» գործա-
կալութիւնը, թէ վերջին կիրակի օրը
ամբողջ օր մը անող կռիւէ մը հա-
ջարձարողները գրաւեցին Ք. Սըթուրի
3 ամբութիւններ, այսինքն 29 քման,
29 թիւան եւ Սօջանո : Ռուսները
գէպի սպանուող քաշուեցան 40 հազի
սպանուած ձգելէ հաջ. իսկ վերա-
ւորածներուն թիւը դեռ յայտնի չէ :
ճարտարները կարանցուցին 3 սպայ ու
10 զինուոր սպանուած եւ վիրա-
ւոր : ճարտարի կրկու թնգանալով ձեռք
ձգեցին :

ԱԶԳԱՅԻՆ

Տարազ գրած է թէ Տ. Պա-
լէքանտը Մանթաշեանց կողմա-
նի կառավարչապետ իշխան Կա-
լիցինի յանձնեց է 15,000 ռուպ-
լի, պատերազմական պիտոյքի
գործածութեւն համար ճարտար
դէմ : Իշխան Կալիցին հայ մար-
դասէրին տղա նուէրը շրկեր է
մեծ-գուքս Ալէքսանտր Միխայի-
լովիչի որ նախագահն է ռուս
տորմիշին ի նպատակ հանգանա-
կութիւն կառարող յանձնաժո-
ղովին :

Նիւ-Նորք Թայմը թերթը
հայասէր յոգնածի մը մէջ
«Հայ Պրուտո» կանուանէ այն
ահաբեկիչը որ վեցհարածեա
նով մը գնդակ արձակած էր Էլ-
միամիտ շրջանակին պետ ռուս
հարիւրապետ Շմէլիւիչի վրայ :

Պրանսայի Սկադելիան որո-
շեր է 500 ֆր. ընծայել Տ. Ար-
շակ Զօպանեանի հայ ժողովրդա-
կան գրքերու թարգմանութեա-
նը հանար :

«Անահիտ» մէջ կը կար-
դանք թէ այս առթիւ Պրանսա-
կան Ակադեմիան Պ. Ա. Զօպանե-

անի Լանկլուա փրքանակը շնոր-
հած է, որ հաստատուած է օտար
լեզուէ գրական գործերու լատա-
դայն թարգմանութեան համար :

Ստուռի նոր կատարածը
ինչպէս Թաւաշի եւ Անգլիայ
մէջ նախագէտ եւ Իտալիա հան-
րային կարծիքը յազած բարձր
միջիններ կազմակերպուած ձեռ
Հոմոլի. Բալիէի եւ Բալիէի մէջ
եւ միւսնայն ասան ձեռք երեւ
փոխաններ հարցադրութեանը
րած են իտալական կ. ուսմա-
րութեան ընթացքի մասին Հա-
յաստանի ու Մակեդոնիոյ գոր-
ծերուն համար :

Յունիս 29 ին Լօնտոնի մէջ
ի նպատակ Հայաստանի տեղի ու-
նեցած միջազգային մեծ համա-
ժողովին մասնակցելու համար
հրաւէր ընդունած է Տ. Մի. աս
Զերադ :

Կը խոստանանք մեր յաջորդ-
թիւով մանրամասնութիւններ
տալ արդ. համաժողովի մասին :
Ցաւօք կիւմայուն թէ ճէյ-
քըսքըրի ողբերգութիւնները
ներկայացնելու մասնաւոր հա-
կում մը եւ հաղադէպ ընդու-
նակութիւններ ունեցող Տ. Կ.
Գալիստիոն հիւծիչ հիւանդու-
թեան մը ենթարկուած ըլլալով
նգիպտոսէ կրէտէ կը մեկնի օգա-
փոխութեան եւ կազմութեան հա-
մար : Առողջութիւն կը սաղ-
թենք երիտասարդ դերասանին,
հակառակ Անահիտի մէջ գետ-
նէ գետին զարնուելուն, վերջա-
պէս Եգիպտոսի մէջ ապացոյցը
տուալ թէ ինք նշանաւոր ող-
բերգու մը ըլլալ կոչուած է : Բայց
Փարաոններու այդ երկիրը ե-
րիտասարդ ողբերգութիւն եթէ ա-
նուն մը չիենց, փոխարէն անոր
առողջութիւնը քանդեց :

ւոյ սփռոցներ, որոնք կարել էին իրենց
կան ձեռքով եւ նուիրել երկու օգոստոսի
ուռնիքը Մարիա Ֆեոդորովնա եւ Ալէքսանդր
Ֆեոդորովնա :

Տաճարի օծումը կատարուեցաւ 1827 թուի
տեմբերի վերջին : Հէնց այդ օրը Հայոց բոլոր եկե-
ղեցիներումը եւ մանկական մեծիկներումը գոհա-
ցողական մաղթանք էին կատարուում Երեւանի
նոր հրամանատարի՝ այն է Ռուսաց թագաւորի
համար :

Բոլոր ժողովուրդը մեծ եռանդով եւ սիրով ին-
դունեց այս գէպը : Ոչ միայն Հայերը, այլ նոր
իսկ Պարսիկները ժողովեցին իրենց միջից մի նը-
շանաւոր գումար 3000 մանկից աւելի : Երեւա-
նու նահանգում գտնուած զօրքին բաժանելու հա-
մար :

Բայց շատ շուտով, համ. րեւալորի սկզբումը,
ինչպէս կրասովկու նոյնպէս եւ Նիսիսի գործու-
նէութիւնները սկսեցին դադար առնիլ : Պասկեի
հետ ունեցած թիւրիմացութիւնների պատճառաւ :

Պասկեի զգոհ էր կրասովկուց դեռ այն
օրից երբ նա սպայաէլոյտի (շր. ր) կատարեց
նա չը ներքե կրասովկու Աշտարակու կոտորած-
քը, Պասկեի թշնամութիւնը : Եւ անոր հետ էր
մեծացել գէպի կրասովկուին, որ ոչ միայն ժողով
էր վերջինիս գիտութեան եւ կառավարչական ըն-
դունակութիւնները, այլ եւ բարեց նորա վերայ

բաղմապատիկ մեղադրանքներ նոր տիրապետած երկ-
րի վերաբերմամբ :

Պասկեի զգոհութեամբ էր, թէ Երեւանու նա-
հանգի եկամուտը կանխարանը չի մտնում, այն ինչ
Աղիբէյլանը, աւելի վատ պայմանների տակ,
հարկ է վճարում, թէ Երեւանու նահանգի արքու-
նի կալուածքի նկարագրութիւնը դեռ չի տրուած
եւ Երեւանի սարգարի պարտքերը չեն ցուցակա-
ւորուած եւ որոշուած, թէ երկրի տեղական մուտ-
քերը ոչ թէ ի գործ են դրուած զօրքի պիտոյք
հոգալու վերայ, այլ տրուած են կրասովկու կող-
մից ժողովրդին ցանկութեւ համար, մինչդեռ զօրքի
պաշարը մեծ գծաւորութեամբ է բերուում վրաստա-
նից : Եւ ին :

Պասկեի զգոհութեամբ էր կրասովկուին, որ նա
Ներսիսի անսահման իրաւունք է ստուել, որով նա
մեծ ազդեցութիւն է դրածում ամեն բանում եւ հա-
յերին վնասակար կերպիւ պաշտպանում է, այն
ինչ ազգաբնակչութեանց երեք քառորդ մասը մահ-
մետակոտորելու են կազմում :

«Եւ մինչև ցայսօր պատերազմական գործում
կրասովկու հետ չէի ծառայած, գրում է Պասկեի-
չը Դիբիչին, այդ պատճառաւ նորան համարելով
մի ընդունակ մարդ, խնդրեցի նորան նշանակել
չտարի կառավարի : Ձեզ քաջ յայտնի է, թէ նո-
րա ծառայութիւնը այդ կողման մէջ որքան օգտա-
կար եղաւ : Եւ կարծում էի նոյնպէս, թէ նա կա-

րող է մի անանձին բանակի հրամանատար լինիլ :
այդ էլ ձեզ յայտնի է, թէ նորա նշանակութիւնը
ինչ հետեւանք ունեցաւ : Վերջապէս նա կառավա-
րիչ նշանակուեցաւ նոր տիրապետած երկրին, որի
ապագայ բոլոր կազմակերպութեան իրազեկումը
կախուած էր նորանից : Թէ նա առաջին անգամ
գործին ինչ տեսակ ընթացք պէտք է տայ, շնորհ
արեւ. ուրեմն տեսնել, կատարեց արդեօք կրասո-
վկին իւր պարտականութիւնն այդ կողման մէջ :
Եւ ին. » : «Եւ կարող եմ որեմն մի այդպիսի
օգնական ցանկանալ ինձ համար. . . Եւ արդեօք
կայսեր առաջին պատասխանատու չեմ գտնուիլ—
հարց է առաջարկում վերջերումը Պասկեիչը— ա-
մենից վերջը գալիս է այն եզրակացութեամբ, որ
կրասովկին պիտանի չի կարող լինիլ »

Դիբիչին քաջ յայտնի էր, թէ կրասովկին ինչ
համար է շատրի կառավարչութիւնը թողել, ձեռք
եւ ինչպէս երեւում էր, աշխատում էր մեղմաց-
նել Պասկեի իշխան հայացքները :

Թէպէտ Բ. ի հաճոյս Պասկեիչի, կրասովկին
յիս կոչուեց Կովկասից եւ ընդհանուր զօրաբանակի
մէջ հաշտեցաւ [զոյնիսին պատմիչ] բայց եւ այն
պէս պաշտակական պատերազմի վերջաւորութեան
համար սուրբ Աննայի Ա. աստիճանի արժանաւ
չքանչան եւ միանուաղ 100000 մանկից գրամական
վարձատրութիւն ստացաւ թագաւորից :

(Շարունակելի)

Одговорникъ А. Курбетиянъ
печатница "Взаимность", — Варна.